

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն ԵԶ-ԷԱՃԱՊՁԲ-26/170 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	Ջրի գազային տաքացուցիչ: Պատային տեղադրման գազով աշխատող հոսքային ջրատաքացուցիչ՝ փակ այրման խցիկով և TURBO տիպի (օդի հարկադրական մղումով) ծխահեռացման համակարգով: Աշխատանքը պետք է իրականացվի բնական գազով, ավտոմատ Էլեկտրոնային բոցավառմամբ և բոցի վերահսկման համակարգով: Ջրատաքացուցիչը պետք է ապահովի մինչև 12 լ/րոպե արտադրողականություն (մոտ 25°C ջերմաստիճանային բարձրացման պայմաններում)՝ հնարավորություն տալով սպասարկել մեկից ավելի ջրի կետեր: Սարքը պետք է ունենա թվային ցուցադրման էկրան՝ ջերմաստիճանի և աշխատանքային ռեժիմների վերահսկման համար, ինչպես նաև ջերմաստիճանի կարգավորման հնարավորություն: Կառուցվածքը պետք է լինի մետաղական պատյանով, սպիտակ գույնի, չափսերը ոչ ավել քան՝ 60 x 35 x 16սմ (Բարձրություն x Լայնություն x Խորություն): Սարքը պետք է համալրված լինի անվտանգության համակարգերով՝ գազի մատակարարման վերահսկում, գերտաքացումից պաշտպանություն, ջրի նվազագույն ճնշման վերահսկում և ծխատարի քաշի հսկում: Պարտադիր պայման՝ ապրանքի համապատասխանության և որակի սերտիֆիկատների առկայություն: Ապրանքի լինի նոր/չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Երաշխիքը՝ 1 տարի, երաշխիքային կտրոնի առկայությունը պարտադիր է: Երաշխիքային ժամկետում խնդիրների և թերությունների շտկում 3 օրվա ընթացքում: Սպասարկման սրահ տեղափոխումը և հետ վերադարձը կատարվում է մատակարարի միջոցներով: Ապրանքների մատակարարումը շահառուի բնակարան պետք է իրականացնի հաղթող կազմակերպությունը: Մատակարարումը կատարել անհրաժեշտ քանակներով՝ պատվիրատուի նախնական պահանջի (հայտի) հիման

	վրա՝ այն ներկայացվելուց հետո 3-օրյա ժամկետում: Նախնական հայտը ներկայացվում է Էլեկտրոնային փոստի միջոցով:
--	--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Мец Циацан в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом БР-БЦДЦПЗР-26/170 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	